

նախկին մէջ պարտուեցան : Ուստայ Օսթին — Սարգիս զորավարին բանա-
կին յառաջապահները իշաշն անցեր
էին :

Օսմանեան զօրքերը Քալաթաթ և
անոր շրջանները բռնած են 25,000
զօրքով, և հետզհետէ նոր գունդեր
կուգան Վիսինէն և Սիֆիայէն ասոնց
հետ միանալու :

— Գաղղեական Բաթի լրագիրը Շէ-
վէթին պատերազմին վրայօք Բեգրու-
սիոյ լրագիրը քննարկելով մէջ հրատարակուած տե-
ղեկագիրը հետեւեալ կերպով կը հերքէ :

« Օսթինիայի պատերազմին վրա-
յօք Կորչաքոֆ իշխանին տուած տեղե-
կութիւնը ամենուրեք յայտնի է : Սի-
ֆիայի (Շէվէթին) բերդին Օս-
մանեանց ձեռքն ինչպէս բռնուած տե-
ղեկագիրը գրողներուն աւելի մեծ դժ-
ուարութիւններ կուտար : Ինչու որ
չէին կրնար ուրանալ որ յիշեալ բեր-
դը Օսմանեան զօրաց ձեռքն ինչպէս : Սի-
ֆիայի լրագրէն առնելով կը ծանուցանե-
այո ձախողութիւնը :

« Տեղեկագիրին վերջէն յայտնաբե-
կի մասին որ Վորշանով գեղապետը
Շէվէթին բերդին առնուելը լռելով,
չառարու հան դիմեր է տաճիկներն ան-
կէջ հալածելու և չէ յաջողեր : Ռուս-
սաց կրած կորուստին վրայօք յիշեալ
լրագրին տուած հաշուին վրայօք բան
մը չենք խօսիր : Այս հաշուին նայե-
լով, տաճիկները 1000 հոգի կորսնցու-
ցեր են, իսկ ռուսները 194 : Տեղեկա-
գիրը Տրապիզոն տարուած գերիներ
բուն վրայօք բան մը չի զրուցեր :

— Բանախի Բանախի լրագրին ալ նո-
յեմբեր 25 թուով հետեւեալ խօսքե-
րը կ'ընէ Վօթան Օղու կղզւոյն մէջ
կեղծ պատերազմին վրայօք ռուսաց
հրատարակած տեղեկագիրին վրայ :

« Պատերազմին վրայօք օտարադ-
գի լրագրաց առած և հրատարակած
լուրերը խիստ հակասական են : Պա-
րէզէն նոր պաշտօնական տեղեկագիր
մը առնուեցաւ ռուսաց կողմէն հրա-
տարակուած, որ առաջիններուն պէս
գէպերուն ճշմարտութիւնը բոլորու-
մին կ'այլադէ : »

Այս տեղեկագիրին մէջ ալ ռու-
սերը յաղթութիւնն իրենց կը պատ-
կանեն, երբոր ամեն մարդ գիտէ որ
ռուսերը չի կրցան արգիլել 2-800
աղանիտայի Վօթան Օղուի տիրելու,
և Պրեզիտի ու Վօթի Վալիի լրագրի-
նէրը Բանախի-Բանախի համաձայն են
այս մասին :

Իհարկէ Բանախի-Բանախի խօս-
քերը :

« Պրեզիտի Վալիի լրագրերը կ'ընեն,
թէ ընդհանուրին նոյեմբեր 12-ին
Պրեզիտի առնուած լուրերը կը ծա-
նուցանեն, որ նոյեմբեր 9-ին օրը
տաճիկները Նուր-ճուլայի գիմայը Վօ-
թան Օղու կղզին գրաւեցին, և հե-
տեքին Ռուսմուգէն մեծամեծ թըն-
դանօթներ բերին շուգենաւով : Շուտ
մը պատերազմի սկսաւ, և կրակը մին-
չեւ իրիկուն տուեց, բայց ռուսերը
չի կրցան տաճիկներ Վօթան Օղուէն
հանել : Վիսինայէն Վօթի լրագրին
գրուած նամակներն այս լուրը կը հա-
տատեն : »

— Ընդգրկուած Վօթի-Բանախի լրա-
գիրն ալ Օսթինիայի պատերազմը
ծանուցանելն ետեւ, Օսմանեան զօ-
րաց քաջութիւնը վրայ Ռուսիայ խա-
ռած ըլլալը կը բացատրէ այս կերպով :

« Պատերազմը շատով և յաջողու-
թեամբ ընցանք համար Ռուսիայ ու-
նեցած մէկ հատիկ յայտնայն կարծի-
քին վրայ հիմնեալ պիտի ըլլայ, թէ
իւր զօրքերը Օսմանեան զօրքերէն
չատ աւելի բաւ են : Իսկ Օսթինի-
այի պատերազմին այս կարծիքին ճիշդ-
արժէքը ճանչցուց բոլոր Եւրոպայի, որ

թերեւս չափազանց փութով մը ըն-
դուներ էր : Այս օրուան օրս յայտնի
է, որ տաճիկները կրնան հաւասար զօ-
րութեամբ պատերազմիլ իրենց թը-
նամեացը հետ, թէ հրացանով, թէ
սուլիով (սիւնիկ) և թէ թնդան-
թով : Նուր-ճուլայի գէմ եղած յարձա-
կումը մէկդի առնելով, Օսմանեան զօ-
րակներուն մինչեւ ան ժամանակը
ըրած բոլոր գործողութիւնները յաջո-
ղեցան : »

Թայի

« Գիտենք որ Ռուսիայ և Տաճիկս-
տանի մէջ բացուած կռիւն՝ նոր գաշ-
նադրութեանց պայմաններով միայն
կրնայ վերջանալ : Այս բանը պատե-
րազմին մասնակից չեղող բոլոր տէրու-
թիւններն աղէկ նկատելու են, և նոյն
իսկ պատերազմող տէրութեանց ալ
ջանքերն այս նպատակին ուղղուելու են :
Իսկ պատերազմի խնդիրը մեծցաւ : Սի-
ֆիայի լրագրէն ինչպէս կ'ընեն, որ
զորքը հիմայ պարզապէս յունաց ե-
կեղեցւոյն համար Ռուսիայ պահան-
ջած պաշտպանութեանը հետ չէ, որ
գեղապետական ծանուցագրի մը մէջ
ամփոփուած է : այլ երկու տէրու-
թեանց բոլոր անցեալ և այժմեան յա-
րաբերութիւնները վեճի և քննութե-
ան կրնան ինչպէս : Իսկ օր գաշնադրու-
թիւնները 1774-ին Քալաթաթի գաշ-
նադրութեանէն սկսեալ մինչեւ Պալմա
Լիմանի պայմանագրութիւնը աւ-
րուած են : Երեւելեան եկեղեցւոյն,
սուրբ Տեղեցի և Գանուբեան իշխա-
նութեանց վերաբերեալ ամեն կարգէ
գուրս պայմանագրութիւնները, որ Ռու-
սիայ տէրութիւնը յաղթութիւններ
ընելով Տաճիկստանէն իր շահուն հա-
մար փրցուցած է, ոչնչացան : Այս
գաշնադրութեանց նորոգումը այսու-
հետեւ այս պատերազմին վախճանէն
և Եւրոպայի բռնած զիջքէն կ'սխալ-
է : Թէ որ Տաճիկստան իւր ճիգերով
կամ Եւրոպական տէրութեանց օգ-
նութեամբ կարող ըլլայ հաւասար
կամ բարձրագոյն պայմաններով Ռու-
սիայ հետ վարուելու, այն ժամանակը
կը ընկնան այն նուազագոյնից պայ-
մանները, որ զանկա Ռուսիայ ձեռքին
տակը դրածի պէս էին : Իսկ թէ որ
Ռուսիայ յաջողի օսմանեան բանակի-
ն խորտակելու, և Եւրոպայի միտքն
շահուցը և քաղաքականութեանը
գէմ կենալու համարձակի, տարակոյս
չի կայ որ ոչ միայն հին գաշնադրու-
թեանց նորոգումը կը պահանջէ, այլ
և Տաճիկստանի վրայ Երեւելեան ան-
կախութեան աւելի քննադատ և ա-
ւելի ծանր պայմաններ կը գնէ : Ե-
ւելորդ է ըսել, որ մեծն Բրիտանիա,
Գաղղիա և Գերմանիան տէրութիւն
ները չեն կրնար պատուաւոր կերպով
և քաղաքականութեամբ ասանկ բան
մը ընդունիլ, և թէ որ Տաճիկստան
այն կէտը հասնի, սեր կը գտնուէր
Պալմա և Եւրոպական պայմանագրու
նադրութիւններն ստորագրած ժամա-
նակը, ան տակնը կը պարտաւորինք
ամեն բան աշխարհ առնելով : Սի-
ֆիայի լրագրէն կառավարութեան յայտը
տակութեանցը գէմ գնելու : Ռուսի
Ռուսիայ տէրութեան ուրիշ բան չի
մտա ընելիք, բայց միայն իւր պա-
հանջմունքներէն ետ կենալու կերպին
վրայ ընտրութիւն մը ընել : Եթէ
Տաճիկներէն յաղթուի, որն որ շատ
հաւանական չեղելի, դարեւ մը ի վեր
ըրած փառասէր յաջողութիւններ
ունեն խորամանկ հարապիտութիւն
ներուն պատուը ամօթալի կերպով պի-
տի կորսնցունէ : Թէ որ տաճիկացի
մարդը թերեւս յաղթէ, պէտք է պատ-
րաստուի գտնէ աշխարհէ երկու ա-
մենէն մեծ աղբալ գէմ մարտնչելու,
որովք արգարեւ շատ հակակրօնութիւն
ունին պատերազմի, բայց թէ որ ան-
գամ մը սկսին պատերազմ ընելու, ևս

քաշուելէ չունին՝ մինչեւ որ Եւրո-
պայի խաղաղութեան թշնամին յաղ-
թեն և պատուաւոր կարգադրու-
թեան մը պայմանները վճռեն : »

Նոյեմբեր 24-ին գիշերը ռուսաց
պատերազմական սքուռա մը փութով
կէն ստիպուած Վիսինի նեղուցը ե-
կաւ ինկաւ և Նիստուր Քալաթաթի հը-
րամանատար Սիսիմաքի պէս գնդա-
պետին հրամանաւր բռնուեցաւ : Այս
սքուռային հրամանատարը իւր նաւուն
կենդանօթները և պատերազմական պա-
շտները ծովը նետել տուեր էր հաւ-
տացներու համար որ յիշեալ սքուռան
վաճառաքեր նաւ մըն է :

Ռուսաց լեզուով գրուած քանի մը
թուղթեր գտնուեցան այս նաւուն
մէջ, որուն անունը Եւր-Քաթէ (Վօթն-
յոֆ իշխանին) Գրքով մէջ բնական գե-
ղին անունը :

Եւր-Քաթէն մէջ մարդիկն էին՝ Տա-
վիտով անուն հրամանատար մը, երեք
սպայ և 30 նաւաստի, որոնք Քալաթաթի
բերդին մէջ բանտարկեցան քառա-
թիւն պահելու համար, ինչպէս որ
Ռուսաստանէն եկած ամեն նաւերը
կը պահեն քաղաքային պատճառաւ :

Եւր-Քաթէ հիմա Տաճիկական դրօշակ
կը կրէ և Օսմանեան ծովային զօրքեր
և հրամանատարները մէջ գրուած են :

Վանոյս 5-ին կայսերական հրամա-
նաւ :

Վսեմփայ Ռիզա փաշան մեծ ծո-
վակալ անուանեցաւ փոխանակ Սահ-
մաւ փաշային :

Տէրութեան Խորհրդի բարձրա-
գոյն ատենին անդամ Շէֆիք պէյը
բարձրագոյն մեծ ծովակալին խոր-
հրդական (միւսթէշար) անուանե-
ցաւ փոխանակ Օլիւհաի պէյին :

Վճիմ փաշան Նիստուրի կայսե-
րական բանակին ընդհանուր սպարա-
պետ անուանեցաւ փոխանակ Վստի
փաշային, և այս առթիւ միւշքու-
թեան բարձր ատիժանն առաւ :

Գարձեալ ամսոյ 7-ին՝

Պրուսայի նախկին կուսակալ Վսե-
մփայ Ռիզա փաշան՝ Բարձրագոյն
ատենին անդամ և Տէրութեան պաշ-
տօնէից Խորհրդակից անուանեցաւ :

ԱՐՏԱՔԻՆ ԼՈՒԻՐԵՐ

ԱՐՏԱՔԻՆ : Ինտրա նոստոյ Գաղղիայ
գեղապետը Վ. Վալի վրի՛ որ արտաքին
փարիզ և անկէջ Գոնթիլայի կան-
չուեր էր, վերադին Լիտրա գոր-
ծաւ :

ԳԱՐԴԱՒԱՆ : Նոյ. 18-ին Վ. Նարօլեոն
կայսրը հրովարտեալով մը հանքածու-
խին, երկաթին և ձկնաբուս (տեղեկ)
մաքը թէթեւեղուց : Այս անօրէնու-
թիւնը նոր գիւրութիւն մը պիտի
տայ արուեստից ծաղիկներ և երկա-
թուղեաց շինութեանը :

Գոնթիլայի անտառներուն մէջ
վեհափառ կայսեր հետ որսորդութիւն
ընելու համար օտար տէրութեանց
գետապաններուն հրաւերներ իրիւն-
ցան : Վանոյս 14-էն մինչեւ 18՝ Պա-
պին նուիրակը և Վստիլոյ, Բրու-
սիոյ, Տաճիկստանի և Տանիմարքա-
յի գետապանները որսորդութիւն ը-
րին Վ. կայսեր հետ :

Եւրոպայի գործող պաշտօնատան
գործակալներուն մէկ մասը Գոն-
թիլայ փոխադրուեցաւ կայսեր ձեռ-
քին տակը գտնուելու համար :

— Եւրոպայի գործող պաշտօնատան
կրկն ձիւղերը միաբանելու ջանքեր
կ'ըլլային, բայց չէին յաջողի :

Այս անգամ եւրոպական լրագիր-
ները կը գրեն, թէ նոյեմբեր 17-ին՝

հանդուցեալ Վալի Գոնթիլայ թագաւո-
րին որդին՝ Եւրոպայի գործող, այս գոր-
ծին համար բոլոր եղբայրներուն կող-
մէն երեսփոխանի պաշտօնով Վիսինա
իրիւնէր է : Պրուսիան մեծ ձիւ-
ղին կամ Գաղղիայ քրիստոն թագաւո-
րութեան ժառանգ Շամպուի կոմսը
կառք մը իրիւն է Վանթիլի մարքիզին
հետ Եւրոպայի գործող Վիսինայէն
Պրոստորֆ գեղը բերելու, ուր կը բը-
նակի Շամպուի կոմսը :

Եւրոպայի գործող Պրոստորֆ հա-
տած տակնը Շամպուի կոմսը մինչեւ
գուրը զանկա գիմաւորեր է և մեծ
համակրութեամբ ու պատուով ըն-
դունէր է : Այս տեսութեան մէջ
երկու գերդաստաններուն մէջը ե-
ղած քաղաքական ծանր ինչիւրը լուծ-
ուեր է վիսնեթու առջև, և երկու իշ-
խանները մէկ մէկէ բաժնուեր են :
Շամպուի կոմսն ալ Վիսինա գաղեր
Եւրոպայի գործողի փոխադարձ այցե-
լութիւն ըրեր է, և երկու գերդաստա-
նին բոլոր անդամները մեծ սիրով և ու-
րախութեամբ տեսնուեր են իրարու
հետ :

Կրտսէ թէ Վալի Գոնթիլայ ժառանգ-
ները Շամպուի կոմսը Գաղղիայ թա-
գին օրինաւոր ժառանգ ձանձկեր են,
ասոր փոխարէն Շամպուի կոմսն ալ
խօսք տուեր է, որ իւր կնոջը մեռնե-
լէն ետեւ ուրիշ հետ չի կարգուի, և
իւր մեռնելէն ետեւ, որ հաւանաբար
նորաւոր առանց զուտի ունենալու պի-
տի ըլլայ, Օսթինեան ցեղէն Վալի
Գոնթիլայ թուր փարիզ կոմսը իւր օրի-
նաւոր ժառանգը ըլլայ :

Թէ որ այս լուրերը հաստատուին,
անտարակոյս այս գեղաքը ամեն քաղա-
քական անձանց ուշադրութիւնը ար-
թնցնելու արժանի է, և արդէն ալ ա-
մենուն ուշադրութիւնը գրաւած է :

— Փարիզի օղբաստիկ փողոցներուն
մէջ նոյեմբեր 24-ին քանի մը հոգի բո-
լեւայէն բռնուեր են : Պաշտօնական
տեղեկութեանց նայելով, սկսած օրէն
մինչեւ հիմա 46 հոգի բռնուեր են
բոլեւայէն, որոնց 2-ը մեռեր և 5-ը
բժշկուեր են : Իսկ մնացածները գեղ-
հրանդանոյնքն են եղեր :

ԻՏԱԼԻԱ : Նոյեմբեր 30-ին Զե-
ւոմի սուրբ Պետրոս եկեղեցւոյն մէջ
Հ. Պապը անուն ընկալի Յիսուս-
եան (Նիկոլիթ) մը ի թիւս սրբաց
գատարագեցաւ չքեղ հանդիսաւ : Վ-
սով երեք Յիսուսեան եղաւ, որ մէկ
տարուան մէջ սրբութեան բարձր ար-
տօնութիւնը կ'ընդունին :

ՌՈՒՍՏԱՍՏԱՆ : Բեթլեհեմի լրագիրը
նոյեմբեր 13-ի թուով յաւելուածի մը
մէջ Կովկասեան բանակին սպարապետ
Վորոնցով իշխանին կողմէն Վ. Նիկո-
լայոս կայսեր իրիւնած տեղեկագիր
մը կը հրատարակէ, որուն մէջ Շէ-
վէթին բերդին Օսմանեան զօրքերէն
առնուելը պատմուած է : Իհարկէ
այս տեղեկագիրին վերջին խօսքերն :

« Այս բերդը պահպանող մեր զօ-
րքերէն միայն քանի մը զինուորական և
երեսփոխան չափ զօր կրցան աղապիլ ե-
րեք հրամանատարով մեծագոյն մասը
վերաւորեալ, որ թշնամեաց (օսման-
եան) գունդերուն մէջէն սուլինի
(սիւնիկ) զօրութեամբ ծամբայ բա-
նալով անցան ու Ուղուրէթ եկան :
Բերդին երկու (չորս) թնդանօթները
օսմանեանց ձեռքն ինչպէս և մէջը
պահուած պաշարները հրայ ճարակ ե-
ղան ասոնցմէ : Օրդապետ Վաղարին իշ-
խանը որ Ուղուրէթ կեցած է, ուրիշ
յարձակումներու կ'սպասէ Տաճիկաց
կողմէն սահմանադրութիւն ուրիշ կող-
մերը, և երկրին պաշտպանութեանը
վերաբերեալ միջոցները զօրացնելով
կը յուսայ օսմանեանց այսուհետեւ

